

*Հաստատվել է՝
Տնօրինության 27.09.2019թ-ի
թիվ 01/112/19 որոշմամբ
Տնօրինության նախագահ-
Գլխավոր տնօրեն՝
Արտակ Հանեսյան
Ուժի մեջ է՝ 03.10.2019թ-ից*

ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան

_____ 20____թ.

_____, այսուհետ՝ **Կապալառու**, ի դեմս տնօրեն _____, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<**Ամերիաբանկ**>> ՓԲԸ-ն, այսուհետ՝ **Պատվիրատու**, ի դեմս _____, որը գործում է _____իման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), կնքեցին սույն կապալի պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրի շրջանակներում Կապալառուն պարտավորվում է իրականացնել _____ (այսուհետ՝ **Աշխատանքներ**)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում ներկայացված պայմանների, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել պատշաճ որակով իրականացված Աշխատանքները և վճարել Կապալառուին դրանց համար:

2. Աշխատանքների որակը և երաշխիքային ժամկետ

- 2.1. Պայմանագրով նախատեսված Աշխատանքների և դրանց իրականացման շրջանակներում օգտագործվող նյութերի, որոնք ձեռք են բերվում Կապալառուի կողմից, որակը պետք է համապատասխանի Պայմանագրի պայմաններին, ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև քաղաքաշինական և սանիտարահիգիենիկ նորմերին, իսկ նշվածների բացակայության դեպքում, նման Աշխատանքներին սովորաբար առաջադրվող պահանջներին:
- 2.2. Սույնով Կապալառուն երաշխավորում է իր կողմից իրականացվող Աշխատանքների որակը և պարտավորվում է անվճար վերացնել Աշխատանքները Պատվիրատուին հանձնելուց հետո 24 (քսանչորս) ամսվա ընթացքում Աշխատանքների արդյունքներում ի հայտ եկող բոլոր թերությունները, ինչպես նաև փոխհատուցել Պատվիրատուի՝ դրա հետևանքով կրած բոլոր վնասները:

3. Աշխատանքների կատարման և հանձնման-ընդունման կարգը

- 3.1. Պայմանագրով նախատեսված Աշխատանքները Կապալառուն պարտավորվում է կատարել/ավարտել ոչ ուշ, քան մինչև 20 _____-ը ներառյալ, որից հետո _____ / _____ / աշխատանքային օրվա ընթացքում կատարել հանձնում-ընդունում:
- 3.2. Կապալառուի կողմից իրականացված Աշխատանքները կարող են ընդունվել մաս-մաս՝ համաձայն Կապալառուի կողմից Պատվիրատուին ներկայացված կատարողական ակտերի (այսուհետ՝ **Ակտ**):
- 3.3. Պատվիրատուի կողմից Ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի ընտրությամբ ոչ ուշ, քան 2 /երկու/ աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված թերությունները կամ հատուցել հայտնաբերված թերությունները վերացնելու ուղղությամբ կատարված ծախսերը և կրած վնասները կամ համամասնորեն նվազեցնել Գինը:
- 3.4. Կապալառուն պարտավոր է չսկսել Հավելված 1-ով նախատեսված մյուս Աշխատանքների իրականացումը, մինչև իր կողմից իրականացված Աշխատանքների արդյունքներում թույլ տրված թերությունների պատշաճ վերացումը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա համաձայնեցված է Պատվիրատուի հետ: Այդ դեպքում կասեցվում է Պատվիրատուի վճարման պարտականությունը մինչև Կապալառուի կողմից իր պարտականությունների պատշաճ կատարումը և հայտնաբերված թերությունների վերացումը, եթե Կողմերը հետագայում պայմանավորվեն վճարումն իրականացնել մասնակի, իսկ Պայմանագրի գնի 100%-ը Կապալառուին վճարելու դեպքում Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին վերադարձնել չկատարված աշխատանքների արժեքը և կատարել Պայմանագրի այլ պայմաններով նախատեսված պարտականությունները:

3.5. Պատվիրատուն կարող է հրաժարվել Ակտը ստորագրելուց, սեփական ընտրությամբ պահանջելով Կապալառուից ոչ ուշ, քան ____ /_____/ աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված թերությունները կամ հատուցել հայտնաբերված թերությունները վերացնելու ուղղությամբ կատարված ծախսերը և կրած վնասները կամ համամասնորեն նվազեցնել Պայմանագրի գինը կամ լուծել Պայմանագիրը և պահանջել վերադարձնելու կանխավճարը և հատուցելու վնասները: Պայմանագրով նախատեսված բոլոր Աշխատանքներն ավարտելուց հետո Կողմերը պարտավորվում են ստորագրել Աշխատանքների հանձնման-ընդունման վերջնական ակտ: Աշխատանքների հանձնման-ընդունման վերջնական ակտը երկկողմանի ստորագրելու պահից սկսվում է Պայմանագրի 2.2 կետում նշված երաշխիքային ժամկետի ընթացքը:

4. Աշխատանքների գինը և վճարման կարգը

4.1 Պայմանագրով կատարվող Աշխատանքների և դրանց ընթացքում օգտագործվող նյութերի գները ներկայացված են Պայմանագրի Հավելված 1-ում, որոնք ներառում են բոլոր հարկերը (այսուհետ՝ **Գին**): Պայմանագրի գինը կազմում է _____ (_____)

ՀՀ դրամ: Կապալառուն ԱԱՀ վճարող չի հանդիսանում:

4.2 Պատվիրատուն պարտավորվում է Պայմանագրի ստորագրման պահից _____ (_____) բանկային օրվա ընթացքում, Կապալառուին վճարել կանխավճար՝ _____ (_____) ՀՀ դրամ գումարի չափով:

4.3 Գնի մնացած մասը, որը կազմում է _____ /_____/ ՀՀ դրամ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կապալառուի կողմից ներկայացված Ակտը Պատվիրատուի կողմից ստորագրելու և Կապալառուի կողմից հաշիվ-ապրանքագիր ներկայացնելու պահից՝ _____ (_____) բանկային օրվա ընթացքում: Հաշիվ-ապրանքագիրը Կապալառուի կողմից Պատվիրատուին ներկայացվում է Ակտը երկկողմանի հաստատվելուց (կնքվելուց) հետո:

4.4 Պայմանագրով նախատեսված բոլոր վճարումներն իրականացվելու են Կապալառուի՝ Պայմանագրի 9-րդ գլխում նշված բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

5. Կողմերի պարտականությունները

5.1. Կապալառուն պարտավոր է.

- 5.1.1 Աշխատանքները կատարել անձամբ, պատշաճ որակով և ժամանակին,
- 5.1.2 Աշխատանքներն իրականացնել սեփական նյութերի և սարքավորումների օգտագործմամբ,
- 5.1.3 Աշխատանքներն իրականացնելիս օգտագործել որակյալ նյութեր, որոնք համապատասխանում են Պատվիրատուի պահանջներին, Պայմանագրի և Հավելված 1-ի պայմաններին, որակի սերտիֆիկատներին և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին,
- 5.1.4 Աշխատանքներն իրականացնելիս բարեխիղճ վերաբերվել Օբյեկտին, Պատվիրատուի գույքին և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները դրա վնասումը և պատահական կորուստը բացառելու նպատակով, իսկ սույն ենթակետով սահմանված պահանջը չպահպանելու դեպքում՝ Պատվիրատուին հատուցել բոլոր վնասները՝ ներառելով և չսահմանափակվելով բաց թողնված օգուտը,
- 5.1.5 Ծավալաթերթով նախատեսված բոլոր Աշխատանքների ավարտից անմիջապես հետո ապահովել Պատվիրատուի տարածքից Աշխատանքների կատարման ընթացքում գոյացած շինարարական աղբի, սարքավորումների, գործիքների և չօգտագործված նյութերի հեռացումը,
- 5.1.6 Պատվիրատուի կողմից Ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուի ընտրությամբ ոչ ուշ, քան ____ /_____/ աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված թերությունները կամ հատուցել հայտնաբերված թերությունները վերացնելու ուղղությամբ կատարված ծախսերը և կրած վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը կամ համամասնորեն նվազեցնել Պայմանագրի գինը, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը լուծելու դեպքում վերադարձնել կանխավճարը և հատուցել վնասները,
- 5.1.7 Պայմանագրի 2.2 կետով սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում անվճար վերացնել Աշխատանքների արդյունքներում ի հայտ եկող բոլոր թերությունները, ինչպես նաև փոխհատուցել Պատվիրատուին դրա հետ կապված բոլոր վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը,
- 5.1.8 Չհրապարակել և/կամ այլ կերպ չտարածել, չօգտագործել Աշխատանքների կատարման արդյունքում իրեն հայտնի դարձած բոլոր տվյալները և այլ գաղտնիք կազմող տեղեկությունները: Ընդ որում՝ սույն կետով սահմանված պահանջը ուժի մեջ է անժամկետ:

5.2. Պատվիրատուն պարտավոր է:

- 5.2.1.** Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարել Կապալառուին պատշաճ որակով կատարված Աշխատանքների համար:

6. Կողմերի պատասխանատվությունը

- 6.1.** Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև պատճառված վնասների համար, Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով, իսկ վերջինովս նախատեսված չլինելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կարգով, ընդ որում Պայմանագրով սահմանված տուժանքի (տույժի և/կամ տուգանքի) փաստացի կիրառման դեպքում տուժանքի տարեկան դրույքաչափը և/կամ տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում:

- 6.2.** Պայմանագրի 3.1 կետով սահմանված ժամկետը խախտելու դեպքում, Կապալառուն Պատվիրատուին, վերջինիս գրավոր պահանջի դեպքում, վճարում է տույժ՝ Գնի 0,1% /գրո ամբողջ մեկ տասնորդական/ տոկոսի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար, իսկ կետանցի 15-րդ օրը միանվագ տուգանք պայմանագրի գնի 10%-ի չափով՝ չդադարեցնելով օրական տույժերի հաշվարկը:

- 6.3.** Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետի ընթացքում ըստ Պատվիրատուի ընտրության սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Կապալառուն Պատվիրատուին, վերջինիս գրավոր պահանջի դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ՝ տվյալ Աշխատանքների Ակտում նշված ընդհանուր գումարի 0,1 (գրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, իսկ կետանցի 15-րդ օրը միանվագ տուգանք Գնի 10%-ի չափով՝ չդադարեցնելով օրական տույժերի հաշվարկը:

- 6.4.** ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրի հիման վրա կամ դրա շրջանակներում համագործակցության ընթացքում Պատվիրատուի կողմից որպես գաղտնիք նշված տեղեկատվության հրապարակման և/կամ հասանելի դարձնելու դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուին Պայմանագրի 4.1 կետով սահմանված գնի փոխարեն վճարել միայն այդ Գնի 50 (հիսուն) տոկոսը, իսկ եթե արդեն իսկ վճարել է Կապալառուին Պայմանագրի 4.1 կետով սահմանված Գնի 50 (հիսուն) տոկոսից ավել գումար, Կապալառուից պահանջել 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Պատվիրատուին վերադարձնել ավել վճարված գումարը, ինչպես նաև հատուցել դրա հետևանքով Պատվիրատուին պատճառված վնասները՝ ներառելով և բայց չսահմանափակվելով բաց թողնված օգուտը և կրում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նման տեղեկատվության հրապարակման և/կամ հասանելի դարձնելու համար:

- 6.5.** Պայմանագրի 4-րդ գլխով սահմանված ժամկետներում Աշխատանքների դիմաց վճարումը չիրականացնելու դեպքում, Պատվիրատուն կետանցի յուրաքանչյուր օրվա համար Կապալառուին, վերջինիս գրավոր պահանջի դեպքում, վճարում է տույժ վճարման ենթակա չվճարված Գնի 0.1 (գրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, իսկ կետանցի 15-րդ օրը՝ միանվագ տուգանք Գնի 10%-ի չափով:

- 6.6.** Մույն գլխով նախատեսված տույժերի և տուգանքների վճարումը չի ազատում մեղավոր Կողմին Պայմանագրով իր կողմից ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու և վնասները հատուցելու պարտականությունից:

7. Անհաղթահարելի ուժ (Ֆորս-Մաժոր)

- 7.1** Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և/կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնց վրա հասնելու արդյունքում անհնարին է դառնում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) ամսից ավելի, ապա Պատվիրատուն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր եղանակով տեղյակ պահելով Կապալառուին:

8. Պայմանագրի գործողության ժամկետը և այլ պայմաններ

- 8.1.** Կողմերը սույնով պարտավորվում են Պայմանագրի կնքման և կատարման առնչությամբ Կողմերին հայտնի դարձած, ինչպես նաև մյուս Կողմի բացահայտած տեղեկատվությունը չիրապարակել, չտարածել, երրորդ անձանց հայտնի չդարձնել, ինչպես նաև երրորդ անձանց նման

տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չընձեռել, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը գաղտնի չի համարվում, քանի որ.

8.1.1. նախապես հայտնի է ընդունող Կողմին այլ իրավաչափ աղբյուրներից/եղանակով,

8.1.2. հանդիսանում է կամ դառնում է հասարակայնորեն հասանելի,

8.1.3. թույլատրված է հրապարակման համապատասխան Կողմի գրավոր համաձայնությամբ:

8.2. Պայմանագրի 8.1 կետով Կողմերի համար սահմանված պարտավորությունը գործում է Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո անորոշ ժամկետով:

8.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման/կնքման պահից:

8.4. Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 2 (երկու) օր առաջ գրավոր ծանուցելով Կապալառուին և վճարելով վերջինիս մինչ ծանուցման պահը կատարված Աշխատանքների համար, իսկ եթե այդ գումարներն արդեն իսկ վճարվել են (կանխավճարի հետ մեկտեղ նաև գերազանցում են փաստացի կատարված Աշխատանքների գինը), ապա Կապալառուն պարտավորվում է Պայմանագրի լուծման պահից _____ (_____) օրվա ընթացքում Պատվիրատուին հետ վերադարձնել չկատարված Աշխատանքների դիմաց ավել վճարված գումարը, բացառությամբ այն դեպքերում, երբ Պայմանագիրը լուծվում է Կապալառուի կողմից պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման հետևանքով, որի դեպքում Կապալառուի կողմից Պատվիրատուին ենթակա է վերադարձման կանխավճարն ամբողջ ծավալով:

8.5. Պայմանագրից բխող բոլոր վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

8.6. Կապալառուի կողմից Պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարելիս իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիության պահպանման պարտավորությունը գործում է անժամկետ:

8.7. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.8. Պայմանագրում, ներառյալ Հավելվածներում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե կատարվում է գրավոր և ստորագրվում է Կողմերի կողմից:

8.9. Պայմանագիրը կազմված է հայերեն, 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

9.1. Սույնով Կողմերն համաձայնում են, որ միմյանց հետ ցանկացած հաղորդակցում/ծանուցում/փաստաթուղթ, որը կապված է Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ Պայմանագրից բխող ցանկացած պահանջի կամ այլ հարցերի հետ, կատարվում է սույն Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի և/կամ պաշտոնական էլեկտրոնային փոստի /առկայության դեպքում/ միջոցով, իսկ դրա/նց /բացակայության դեպքում սույն Պայմանագրում նշված փոստային հասցեով առաքման եղանակով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ: Ընդ որում, Կապալառուն համարվում է պատշաճ ծանուցված, երբ ծանուցումն ուղարկվել է Կապալառուի Պատվիրատուին տրամադրած պաշտոնական և/կամ այլ էլեկտրոնային փոստի հասցեով, և առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը: Այս դեպքում Կապալառուն համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումն ստանալուն հաջորդող 5-րդ /հինգերորդ/ օրվանից:

Պատվիրատու՝
“ԱՄԵՐԻԱԲԱՆԿ” ՓԲԸ

Կապալառու՝

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 2
հեռ.՝ 56-11-11
ՀՎՀՀ՝ 02502212
ՀՀ ԿԲ Թ/Հ 103002101576
office@ameriabank.am

Տնօրեն

Հասցե՝ _____
Հեռ. _____
ՀՎՀՀ՝ _____
Հ/Հ՝ _____
Էլ. փոստի հասցե _____

_____ի և Ամերիաբանկ ՓԲԸ-ի միջև
____/____/____թ. կնքված Կապալի պայմանագրի Հավելված 1.

(կցվում է, առդիր՝ էջ)